

իւրաքանչիւր դպրոցի աշակերտները ուղևորուեցին իրենց դպրոցը, որ այստեղ, մայրենի լեզուի ուղարկման տաճարի կամարների տակ և արտասանուի մայրենի բարբառով երախտագիտութեան զգացմունքը, Ս. Մեսրոպի իւր ջրով բռնած ծաղիկներից առաջնութեան փունջը իւրան նուիրելու համար:

Նոյն օրը երեկոյիհան թհմական դպրանոցը
երեկոյթով պատռւեց այդ միծ տօնը. խօսեց յօ-
քիլեանի առթիւ գրականութեան ուսուցիչ՝ պ. Ա.
Զամբինեանը կոչմանը և աւանդած առարկայի
համապատասխան իւր փարթամ ոճով, խօսեց պ.
Հ. Աճառեանը պօլսեցուն յատուկ ճարտասանա-
կան համարձակ լեզուով. խօսեց նաև աշակերտ
Գ. Զալաշեանը, և իւր կազմած յաջող ճառով
գարմացրեց մեղ՝ հանդիսականներիս. —նա գիւ-
ղացի էր, «գիրը» նրան ազատել էր անյայտու-
թեան զրկից և ձգել գիտութեան տաճար... իսկ
քառաձայն խմբի անուշաբոյր մեղեդիները թա-
փանցում էին մարզու մինչև սրտի խորբերու-

Հանդէսը վերջացաւ արժ. Վահ. վարդապետի «կեցցէ հայ ազգը և հայ զիրը» խ քերով, որին պատասխանեցին բոլոր հանդիսականները «կեցցէ» աղաղակներով։ Ժամի 11-ին վերջայցաւ հանդէսը։

վերջին օղակը հէնց այսօր կոփռում է մեր եղբայրների արիւնով:

Բայց եղել են շրջաններ, երբ հայն էլ ան-
վերջ արիւնհեղութիւններից մի փոքր շունչ քա-
շելով՝ ընթացել է խաղաղ կուլտուրայի ճանա-
պարհով, ոգևորուել է վսիմ գաղափարներով,
ձգտել է լուսաւորութեան։ Պատմութեան այս-
պիսի շրջաններն են, որ կազմում են մի ազգի
փառքն ու մեծութիւնը։ Սրանք են, որ մի մի
գոհարի պէս փայլում են անցեալի համասփիւռ
աղջամուղջի միջից, սրանք են, որ դարերի խոր-
քից փայլում են իրեւ պայծառ փարուներ աղ-
գերի յառաջադիմութեան շաւիդների վրայ։ Եւ
Հայկական պատմութեան ամենափառաւոր ու
նույրական շրջանը այն չէ, երբ Տիգրան Մհեմը
Հայոց գլխաքի համբաւը մինչև Հռոմ հասցրեց,
այլ այն, երբ մի անձնուեր գործիչ սեփական
գիր ու գրականութիւն պարեւց ազգին և փըր-
կեց նրան վերահսկ կորստից։ Տիգրաններն ան-
ցան, նրանց հետքն էլ ջնջուեց, բայց հեռատես
Մհերովի երախտիքը չմոռացուեց ու չպիտի
մոռացուի, քանի որ աշխարհում գէթ մի հայ
սիրտ բարախի։ Նրա այբուբենը շատ գտանդ-
ների մէջ հայրենիքի փրկիչ եղաւ ու պիտի լի-
նի յաւիտեան։

U. S.

Кългъчъръ Чъчиъс

Դպրանցի աշակերտ Գէորգ Զալաշեանի արտասանած նառը տառերի գիտի 1500-ամեակի առթիւ նոյն դպրանցում կազմակերպուած ե-
րեկոյթին.

Մեր կեանքը շատ քիչ մխիթարական բան
ունի. շատ հին ժամանակներից բախտը, կարծես,
երես է դարձրել մեր ազգից, հայ երկնակամարը
սկզբից ի վեր մառախլապատ է եղել և եթէ
հազիւ երբեմն կենսատու արել գողարիկ հայ-
ացցարով ամպերի ետևից նայել է Մասիսի ալե-
պարդ գագաթին, թանձր թուխտերը անհեթեթ
ծալքերով անմիջապէս ծածկել են նրա տեսքը
Հայոց աշխարհից: Արդէն Հայոց պատմութիւնը
ինքնին մի հսկայական ողբերգութիւն է, որ ներ-
կայացնում է մի ամբողջ ժողովրդի դարերի ըն-
թացքում կրած անասելի տառապանքները, հայ-
կական կեանքը անյիշելի ժամանակներից եղել է
և արիւնոտ տեսարանների մի երկար շղթայ, որի

Չորրորդ գալում քրիստոնէութիւնը Հայոց
ազգային կրօն էր դարձել. քաղաքական իշխա-
նութեան կից առաջացել էր նաև հոգեոր իշխա-
նութիւն, որ աւելի ու աւելի գերակշռող դիրք
էր ստանում և խոստանում էր ապագայում շաղ-
կապիչ ու հովանաւոր դառնալ անպաշտան հայ
ժողովրդի համար. Սակայն, որպէսզի բրիստոնէ-
ութիւնը կարողանար ստանձնել իր այս գերը,
պէտք էր, որ ժողովուրդը հասկանար նորան,
հասկանար ու հոգով նուիրուէր Բայց նա գեռ
նոր էր մտել Հայաստան, ժողովուրդը գեռ լիո-
վին չէր իւրացրել նրա էութիւնը, մանաւանդ
որ Ս. Գիրքը եկեղեցիներում յոյն և ասորի լե-
զուներով էր կարդացում, որից նա ոչինչ չէր
հասկանում: Եւ նա ապրում էր իր հին աւան-
դական կեանքով, որ գեռ թարմ էր նրա յիշու-
զութեան մէջ: Հեթանոսութիւնն էր, որ տիրում
էր քրիստոնէութեան դիմակի տուի: Հոգեոր իշ-
խանութեան գլխաւոր ջանքն էր քրիստոնէական
ոգի տարածել հայ ժողովրդի մէջ: Այսպէս գոր-
ծեցին Ներսէս Մեծն ու նրա յաջորդները. բայց
նրանց ջանքերի արգասիքը շատ չնշին էր: Հայ
ազգին պակասում էր մի բան. և այդ պակասը


վիճակուած էր լրացնել մի մեծ մարդու, որի
անունն էր Մեսրովը Մաշտոց:

Մեսրովը ծնուած է Տարօն գաւառի Հա-
յոկ գիւղում, մօտ 360 թուականին: Նրա ծագ-
ման ու կեանքի մասին մենք շատ քիչ տեղե-
կութիւն ունենք: Վարդան անուն մի մարդու
որդի էր նա: Մանկութեան հասակում նա լու-
կրթութիւն էր ստացել և հմուտ էր յոյն և ա-
սորի լիզուներին. աւարտելով իր ուսումը՝ նա
մտել էր պետական ծառայութեան մէջ և ար-
քունի դիւանի ատենադպիր կարգուել: Բայց
դիւանագրական գործունէութիւնը երիտասարդ
Մեսրովին չէր գոհացնում: Այս է պատճառը,
որ չնայելով իրան սպասող փայլուն ապագային,
նա թողեց պաշտօնը, վարդապետ ձեռնադրուեց
ու բաշտեց անապատ: Բայց նա ծնուած չէր
ասկետ լինելու, անապատական անշարժ կեանքը
իր նեղ ու միակողմանի իդէալով չէր համապա-
տասխանում նրա հոգուն. նա կոչուած էր ժողո-
վրդի համար:

Գործելու տինչը դուրս բերեց նրան անապատից
ու մղեց գէպի ժողովուրդը: Նա զգաց իր կոչու-
մը և երբէք չլաւաճանեց նրան. ժողովրդի լու-
սաւորութիւնը եղաւ նրա իդէալը, և նա նրա
համար ապրեց ու գործեց մինչև վերջ: Նա զնաց
այնաեղ, ուր հայ շինականը կարօտ էր կենդա-
նի խօսքին, ուր նա զեռ ապրում էր իր պապե-
րի աստուածներով, ուր կեանքը դեռ հեթանո-
սութիւն էր շնչում: Նրա կարողութեան գլխաւոր
ասպարէզն էր Սիւնիքն ու մանաւոնդ գինեկա
Գողթն գաւառը գուսանների ու բանաստեղծու-
թեան հայրենիքը, ուր ամեն ինչ կապուած էր
հեթանոսական անցեալի հետ: Մեսրովը գոր-
ծում էր մեծ ոգեսորութեամբ. բայց շուտով նա
համոզուեց, որ իր ջանքերը շատ քիչ ազգեցու-
թիւն են ունենում, նա հասկացաւ, որ քրիստո-
նէական գաղափարները միշտ էլ օտար կը ման
հայ ժողովրդին, քանի որ նա զբկուած կը լինի
Ս. Դիրքը հասկանալու հնարաւորութիւնից: Եւ
այսեղ ահա Մեսրովը միտք յլացաւ յօրինել
հայկական տառեր և թարգմանել Աստուածա-
շունչը: Այս նպատակով նա թողեց քարոզչական
գործունէութիւնը և զնաց վաղարշապատ, Սա-
հակ հայրապետի մօտ: Հեռատես Սահակը, լաւ
հասկանալով գործի կարուրութիւնն ու փրկա-
րար հետհանքները՝ քաջալերեց նրան և խոս-
տացաւ աջակցել: Նրանք հազորդեցին այս միտ-
քը Վասմշապուհ թագաւորին. ուսումնասէր թա-

գաւորը շատ ուրախացաւ և յայտնեց, թէ Միջա-
ղեաքում գտնուելիս տեղեկացել էր, որ ասորի
թանիէլ եպիսկոպոսի մօտ հայկական նշանա-
գրի կան: Վահրիճ իշխանը Միջագետը ուղար-
կուեցաւ Դանիէլի մօտ եղած տառերը Հայաս-
տան բերելու: Սահակն ու Մեսրովը աշակերտ-
ներ հաւաքեցին և տառերը բերուելու պէս սկսե-
ցին սովորեցնել: Երկու տարի չարչարուեցին,
բոյց ոչինչ գուրս չեկաւ: Տառերը պակաս էին և
հայոց լիզուի հնչիւնները լիովին չէին արտա-
յայտում: Այս պակասը լրացնելու համար Մես-
րովը իր մի քանի հասակաւոր աշակերտների
հետ անձամբ գնում է Դանիէլ եպիսկոպոսի
մօտ, բայց ապարդիւն: Իր հետ բերած աշակերտ-
ներին տեղաւորելով Եղեսիոյ ասորական գըշ-
որցներում՝ Մեսրովը դիմում է հմուտ անձանց
օգնութեան, բայց ոչ ոք չի կարողանում նրան
գոհացնել: Օտարներից յուսախար՝ նա իր ոյժե-
րին վստահանալով՝ սեփական ջանքերով յօրի-
նում է հայ տառերը կամ նրանց պակասը լրաց-
նում: Տառերի գիւտը այնպիսի մեծ գործ էր,
որ ժամանակակից մատենագիր Կորինը խօսք
չի գտնում իր հիացմունքն արտայայտելու: Հայ
ժողովուրդը հրաշք համարեց Մեսրովի այս հան-
ձարեղ գործը և աւանդութիւնը պատմում է, թէ
աստուածային աջը դրոշմեց հայ տառերը քարի
վրայ, որոնք տպաւորուեցան Մեսրովի մտքում.
իսկական հրաշքը Մեսրովի ստեղծագործող հան-
ձարն էր, նրա ծննդական միտքն ու կամքի կո-
րովը: Անխոնջ աշխատանքով ու անվճատ համ-
բերութեամբ նշանագրերը յօրինելով, գասաւո-
րելով ու գեղագիր Հոռիանոսին գծագրել տա-
լով՝ նա իսկոյն ձեռնարկում է թարգմանութիւնն,
և առաջին հայ գիրը լինում է Սողոմոնի առա-
կաց գրքի թարգմանութիւնը: Աւարտելով թարգ-
մանութիւնը՝ Մեսրովը ու իր աշակերտները
շտապում են Հայաստան, գործադրելու այս մեծ
ու սքանչելի գիւտը: Նրանց գալստեան լուրն
առնելով՝ թագաւորն ու հայրապետը նախարար-
ների ու զօրքի հետ լնգառաջ են գնում Մես-
րովին ու նրա աշակերտներին, որոնք փրկու-
թեան պատգամ էին բերում հայ ժողովրդին:
Բուռն ոգեսորութեան մէջ էր հայ ազգը, տեն-
գային շարժում էր տիրում ամէնուրեք: Բացւում
էին գպույներ, գաւառներից խմբւում էին մա-
նուկներ, որոնք դաստիարակուելով Սահակի ու
Մեսրովի ինամակալութեան տակ՝ հայրենի եր-
կը լուսաւորութեան ջաները պիտի լինէին: Այս

Ճ-871



դպրոցներն էին, որ տաւին մեզ այնպիսի գործիչներ, ինչպիսին առաջնիկ Կողբացի, Յովսէփ Պաղնացի, Կորիւն, Դեռնդ երէց, Արձան Արծրունի և ուրիշներ, որոնք ցրուեցան հայ ժողովրդի մէջ և խօսքով ու գործով շարունակեցին իրանց ուսուցիչների սկսածը. սրանց ջանքերով հայ գրականութիւնը ճոխացաւ ինքնորոյն ու թարգմանական գործերով, հայ լեզուն մշակուեց ու զեղեցկացաւ, դպրոցները ծաղկեցաւ և ստեղծուեց Հայ գրականութեան Ոսկեղարը:

Իսկ Մեսրովը, Հայաստան գառնալուն պէս, շտապով վերջացնելով Ս. Գրքի թարգմանութիւնը՝ դիմում է դէպի իր գործունէութեան նախկին վայրերը՝ Գողթն գաւառն ու Միւնեաց անմատոյց լեռները: Ապա այնտեղից անցնում է Վրաստան և վրաց համար էլ տառեր յօրինում: Միայն վրացիք չէին, որ վայելեցին Մեսրովի հանճարի զեղեցիկ արդիւնքը, Ազուաններն էլ անմասն չմնացին, նա սրանց էլ տառեր տուեց: Եւ Մեսրովի մեծութիւնն էլ արտայայտում է մանաւանդ նրանով, որ նա իր շնորհքի արգասիքը չի թագցնում նաև օտարից. մի բան, որ ցոյց է տալիս նրա մէջ եսական զգացմունքի կատարեալ բացակայութիւն:

Մինչդեռ այս բոլորը տեղի էր ունենում Պարսկական Հայաստանում. (Հայաստանը բաժանուած էր երկու մասի) Յունաց բաժնի Հայաստանը զուրկ էր այս բարիքներից, որովհետ յոյն կառավարիչները չէին թոյլ տալիս գըլքոցներ բանալ և Հայ լեզուն աւանդել: Մեսրովը ստիպւում է անձամբ Բիւզանդիոն գնալ՝ կայսրից թոյլութիւն ինդքսերու: Թէոդոս կրտսեր կայսրն ու Ատամիկոս պատրիարքը, պատուով ընդունելով նրան՝ տալիս են հարկաւոր հրահանքները, և Մեսրովը շատպում է Հայաստան, այնուհետև յունաց բաժնում էլ սկսւած է նոյն գործունէութը:

Իսկ միւս կողմից Սահակ Պարթեն էլ պարապած էր զրական գործերով. բայց թարգմանելու գործերը շատ էին և երկու անհատի ուժերից բարձր. այստեղ ահա նրանց օգնութեան են համուռմ անդրանիկ աշակերտները: Որովհետեւ Հայաստանում յունական ու ասորական բնակչեր շատ քիչ կային, եղածներն էլ անստորդ էին, այս պատճառով Սահակն ու Մեսրովը իրանց աշակերտներից երկուսին՝ եղնիկ Կողբացուն ու Յովսէփ Պաղնացուն ուղարկուն են Ասորիք, որ նախ ասորերէն գրքերը հայացնեն, առ

ոլա երթան Բիւզանդիոն յունական գրականութեան յայտնի գործերը թարգմանելու. այստեղ նրանց հետ միանում են իրանց ընկերներից Կորիւնն ու Ղեռնդը, և շտապով վերջացնելով թարգմանութեան գործը՝ դառնում են հայաստան Որպէս մեղուներ, որոնք ծաղկից ծաղկի թռչելով հաւաքում են նոյն քաղցր հիւթն ու բոյը և գառնում են տուն՝ բեռնաւորուած անուշաբոյր մեղրով, այսպէս նաև Հայ թարգմանիչների խումբը անցնելով երկից երկիր և իր մէջ ամբարեկով օտար երկրների լոյն ու գիտութիւնը՝ շտապում էր հայրենիք, հաղորդելու նրան իր հետ բերած թանկագին նուէրը, նոր լուսով լուսաւորելու նրան: Ուրիշ շատ գործերի հետ նրանք բերում են նաև Աստուածաշնչի հօթանասնից թարգմանութեան մի ստոյգ օրինակ: Սահակն ու եղնիկը սկսում են Մեսրովի թարգմանութիւնը յունական օրինակի հետ համեմատել ու ստուգել, և այս երկրորդ թարգմանութիւնը այնքան հարազատ է գուրս գալիս, որ իրաւամբ կոչում է թագուհի թարգմանութեանց:

Այնուհետև Մեսրովը իր շրջանաւարտ աշակերտներին ուղարկում էր Հայաստանի զանազան գաւառներ ժողովրդի բարոյական կարիքները հոգալու, իսկ երբեմն երբեմն ինքն էլ էր այցելում և հսկում նրանց գործունէութեան վրայ: Այսպիսով կարճ ժամանակում երկու միծ մարդկանց՝ Մեսրովը Մաշտոց ու Սահակ Պարթենի շնորհիւ Հայաստանը հիմնովին փոխուեց ու անձանաչելի դարձաւ:

Մինչդեռ մի կողմից Հայաստանում այսպիսի միծ կուլտուրական յեղաշրջում էր տեղի ունում՝ Արշակունի պետութիւն արդէն վերջանում էր: Հեռատես Վռամշապուհից յետոյ թագաւոր է կարգում Պարսից Շապուհ արքայորդին, որ սակայն երկար չի կարողանում մնալ. նրան յաշորդում է Վռամշապուհի որդին՝ Արտաշէսը, վատարարոյ ու սանձարձակ մի պատանի: Հայ իշխանները ձանձրանալով նրանից, դիմում են Պարսից թագաւորին, որ Արտաշէսին գահընկէց անէ. Շապուհի բարքարկանութեան նպատակն էլ հէնց այդ էր: Ծերտունի Սահակ կաթողիկոսը աշխատում է համոզել նրանց, որ յետ կինան այդ աղքակործան բայլն անելուց բայց նրանք չեն լսում և խնդրում են Շապուհից, որ Սահակն էլ կաթողիկոսութիւնից զրկէ: Թագաւորն ու կաթողիկոսը արգելուում են Պարսկաստան երկրը անտէր է մնում. կաթողիկոս են նշանակ-



182-66

ուում մի քանի անարժան անձինք։ Հայ ժողովրդի խնդրով՝ Սահակը արձակուում է, բայց նա հրաժարում է հայրապետական աթոռից և առանձնացած կեանք վարում, երբեմն միայն գուրս գալով անհովիւ ժողովրդի հոգեոր կարիքները հոգալու, Նրա մահուանից յիշոյ այդ հասները իր վրայ է առնում Մեսրովը, բայց սա էլ երկար չի ապրում. իր գործակցի մահուանից 6 ամիս անցած սա էլ է վախճանուում 440 թուին։ Նրա մարմինը ամփոփած է Օշոկան գիւղի եկեղեցու խորանում։ Փառաւոր յուշարձաններ չեն զարդարում նրա հանգիստը. մի հասարակ քար է նրա համեստ շիրիմը, բայց ամէն մի հայի սրտում երախտագիտութեան արձան կայ իր միջ բարերարի համար։

Այսպէս ուրիշն այն ժամանակ, երբ հայրենիքը կորստեան վտանգի մէջ էր, Մեսրովը նրան օգնութեան հասաւ։ Հայ ժողովրդին նա քաղաքական անկախութիւն չտուեց, Հայաստանին սպասնացող հօր թշնամու կուռ բանակները չխսրտակեց. Հայոց աշխարհը անմատչելի բերդերով չամրացրեց, — բայց նա տուեց նրան մի բան, որով նա գիտակցեց, թէ ինչ է ինքը. և այդ գիտակցութիւնը ողեորութեան ազբիւր եղաւ այն անընդհատ պայքարի մէջ, որ նա մըրդեց դարեր շարունակ իւր տղային ինքնուրոյնութիւնը պահպանելու համար։ Թշնամու զոռ բանակները ջախջախուեցան այս ներքին ուժի առաջ, անպահտպան հայ երկրի մէջ ամէն մի մարտիկի սիրտը մի անմատչելի բերդ եղաւ ու պաշտպանեց իւր ազգային սրբութիւնները։ Բայց ինչ էր Մեսրովի տուսքը. — նո գիր պարզեց հայ ժողովրդին այն ժամանակ, երբ սուր էր պահանջուում. Եւ նո չխսլուեց. այն մի բանի նշանախիցները արին այն, ինչ որ չկարողացան անել անեղ բանակները. Մեսրովի տառերը տուին մեղ այն ամէնը, որ մեղ իրաւունք է տալիս կուլուրական ազգերի կարգը զասուելու. Մեսրովի տառերը եղան հայութեան ցըուած մասերի միաւորիչը, նրանք շաղկապեցին հայ սրտերը անիսղելի կապերով և հաստատեցին այն ներքին ոյժը, որ անընկճելի մնաց բռնակալների սոսկալի հալածանքների տուաջ։

Աւարայրի յաղթական պարտութիւնը փայլուն կերպով հաստատեց այս ճշմարտութիւնը։

ԳԷՈՒՐԳ ԶԱԼԱՇԵԿԱՆ

ԿՈՅՈՐԱՃԸ

Անծանօթ բառ չէ այս բառը հայ մարդուն, կարծես հայը իւր ծննդեան օրից, օրօրոցում, միայն կոտորածի մասին է երգեր լսում, կոտորածի զարհուրելի նկարագիր պարունակող պատահելու կարգում հայ պատանին ու երիտասարդը, հայ աղջիկն ու կինը իրենց արդ ու զարդը կոտորածից աղատուածների համար հաւաքուող նուէրներին տալու համար են պահում։ Եթէ ամեն մի ազգի վերագրենը որևէ բառի յատուկ իմաստն ըմբռնելու շնորհը, ապա հայ ժողովուրդը ամենից լաւ «կոտորած» բառն է ըմբռնելու։

Կայծակի արագութեամբ է տարածւում այդ բառը մեղանում և մի տեսակ սարսուռ աղգում բոլորին. մահուան տագնապի երկիւղը մի անգամից իւր դժգոյն թևերով անարեկուում է բոլորին և ամեն ինչ կարմիր արեան գոյն է սատնում, ամեն շունչ կենդանի որևէ պատսպարան է վնտրում։ Զարհուրելի է այն կանչն ու աղաղակը, որի խուլ արձագանքներն են համում մեղ՝ սուսահայերիս և մեր արիւնն էլ սառցնում երակներում և մեր սերունդն էլ ճմլում, մեր հոգին էլ տակն ու վրայ անում։

Տաճկանայի համար օրհասական ժամերն են սկսուել և պատրիարքը, ազգային ժողովը, մամուլը իրենց սովորական քողոքներն ու հրաժարականներն են կրկին հանգէս բերել. Սակայն այդ ինչ զէնքերը, այդ խրատական բողոքները նոր ոչքիմի ժամանակն էլ նոյն գնահատութիւնն են արժանանում, ինչ որ և առաջներում։ Տաճկի համար յոյս տալլը, խոստումներ անելը միշտ էլ խարելու, կեղծելու, ստելու սովորական, արդէն պատմականորէն սրբագրուած ձեն է եղել և այդ գարաւոր սովորութիւնից նրան ոչ մի ոչքիմ չի կարող ետ կանգնեցնել։ Որոշ տարիներ անցնելուց յիշոյ, տաճկի կառավարութիւնը կարծես անհրաժեշտ է համարում հայ ժողովրդից արիւն առնել, որ իւր ներքին կեանքի անախորժութիւններն ու բայցայումը չտեսնէ, մինչդեռ այդ արիւնը նրա երկրի տմբողջութեան հիմքը քայքայող ստորերկեայ հրաբուխի համար առնեախիստ աղբիւրն է գառնում։ Քրդերի արիւնարբութիւնը անկասկած հնարաւոր է զապել եթէ իրօք տաճիկ կառավարութիւնը խորը ցանկութիւն ունենայ այդ անելու, սակայն չի եղել այդ ցանկութիւնը և չկայ և քիւրդ տարը հետպահան